«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման ՝ *Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը հոգեբանական զարգացման գործում*

Առարկան ՝ *Անգլերեն*

Հետազոտող ուսուցիչ ՝ *Նարինե Սարգսյան*

Ուսումնական հաստատություն ՝ *Ն. Վ. Գոգոլի անվան թիվ 35 հիմնական դպրոց*

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……3

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը հոգեբանական զարգացման գործում……..……..……3

Եզրակացություն……..……..…13

Օգտագործված գրականության ցանկ……..……..15

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը հոգեբանական զարգացման գործում

Ներածություն

Օտար լեզու սովորելն այսօր միայն ինքնակենսագրականը հարստացնելու և հեշտորեն ճանապարհորդելու, կամ օտարերկրացիների հետ շփվելու միջոց չէ: Մեր օրերում 2 և ավելի օտար լեզուների իմացությունը պարզապես անհրաժեշտություն է: Օտար լեզուները հրաշք են: Մեծերից մեկն ասել է, որ յուրաքանչյուր լեզու, որը մենք գիտենք, մեզ ավելացնում էևս մեկ զույգ աչք: Լեզուն այն բաներից է, որը մեզ ստիպում մարդկանց տարբերակել կենդանիներից: Օտար լեզվի իմացությունը, ի թիվս այլ բաների, մրցակցային առավելություն է: Մի խոսքով օտար լեզվի իմացությունը ժամանակի անհրաժեշտություն է:

Բազմաթիվ գիտնականներ և ուսուցիչներ փնտրում են օտար լեզուների ուսուցման արդյունավետ տեխնիկա, մեթոդներ և միջոցներ, որպեսզի ուսումնական պրոցեսը դարձնեն ավելի հետաքրքիր և բազմազան՝ սովորողներին դրդելով բեղմնավոր համագործակցության ուսուցչի հետ: Ներկայումս գոյություն ունեն բազմաթիվ համակարգչային ծրագրեր, որոնք կարող են զգալիորեն հեշտացնել ուսուցչի աշխատանքը, ինչպես նաև սովորողի համար ուսուցանվող նյութը դարձնել անհամեմատ ավելի մատչելի, հեշտ երբեմն նույնիսկ հաճելի և զվարճալի: Օտար լեզվի (այս դեպքում՝ անգլերենի) դասերին համակրգիչների օգտագործումն, ինչպես նաև դրանց միջոցով համացանցի տված հնարավորություններից օգտվելը զգալիորեն մեծացնում է կրթական գործընթացի ինտենսիվությունը:

Այսօր նույնիսկ վերջին տեխնոլոգիաներին միջամտելու համար կայուն անձեռնմխելիության մեջ գտնվող շատ «ավանդական» ուսուցիչը չի կարող ժխտել, որ ինտերնետը հնարավոր վերապատրաստման ռեսուրսների բավականին հարուստ աղբյուր է:

Այս հետազոտական աշխատանքի մեջ կփորձեմ կիսվել սեփական փորձով՝ փորձելով համոզել գործընկերներիս, որ դասերին ինտերնետի օգտագործումը կարող

է ավելի բարձր անգլերեն սովորելու դրդապատճառ առաջացնել: Համաշխարհային ինտերնետ ցանցը ստեղծում է բոլոր անհրաժեշտ պայմանները և տալիս տեղեկատվություն անսպառ աղբյուրներ թե՛ սովորողների և թե՛ դասավանդողների համար:

Հաշվի առնենք նաև, որ անգլերենը գերիշխող վեբ լեզու է, հետևաբար ինտերնետն, իր հերթին կդառնա անգլերենի ուսումնասիրության ինքնատիպ մի վայր: Ինտերնետն անընդհատ զարգանում է: Այն ստեղծեց դինամիկ միջավայր կապի և տեղեկատվության կառավարման համար: Միևնույն ժամանակ ինտերնետը մեր կյանքի սահմանների համար կբերի սոցիալական փոխգործակցության նոր ուղիներ: Տեխնոլոգիաներ, ինչպիսիք են MP3-ը, iPod-ը, Skype-ը, ինչպես նաև բլեգերը ստեղծում են հաղորդակցման, տեղեկատվության, գրականության և նորությունների լայն տեսականի, որոնք մատչելի են, ամենուր և միշտ:

Այսպիսով՝ անգլերենը գերակշռում է ինտերնետում շատ ոլորտներում – զվարճանքից գիտություն: Եթե ցանկանում եք տիրապետել անգլերենին, ինտերնետը ձեզ տրամադրում է աննախադեպ հնարավորություն:

<u>Բառապաշարն ավելի կարևոր է, քան քերականությունը.</u>

Անգլերեն լեզվով սահուն խոսելու համար անհրաժեշտ է հեշտությամբ օգտագործել առնվազն տասը հազար բառ: Դպրոցահասակ երեխաներն, ինչ խոսք, ունեն բավականաչափ մտավոր հնարավորություններ անհրաժեշտ բառապաշարը շատ կարճ ժամանակահատվածում յուրացնելու համար: Բայց, ցավոք, մենք բոլորս էլ գիտենք, թե որքան արագ կարող են նրանք մոռանալ այն բառերը, որոնք նրանք նայել են բառարանում: Ավելին՝ նրանք հաճախ ուշադրություն անգամ չեն դարձնում իրենց համար նոր ու անծանոթ այն բառերի թարգմանությանը, որոնք իրենց տալիս է ուսուցիչը: Փոխարենը, առաջին հայացքից տխուր և անհետաքրքիր այս աշխատանք երբ փորձում ենք կատարել հեռախոսների և կամ ինտերնետի օգնությամբ, այն դառնում է շատ հետաքրքրաշարժ, գրավիչ, շատ հաճախ նույնիսկ զվարճալի աշխատանք՝ որին շատ հաճախ փորձում է մասնակցել նույնիսկ դասարանի ամենապասիվ աշակերտը: Բարեբախտաբար, ինտերնետը մեծապես հեշտացնում է բառերի ուսումնասիրությունը: Ինտերնետում մենք կարող ենք օգտագործել ինչպես առցանց, այնպես էլ հավելվածային բառարաններ: Հատկանշական է այն փաստը, որ

գոյություն ունեն առցանց բազմաթիվ բառարաններ, որոնց օգտագործման համար ամենևին էլ անհրաժեշտ չէ ինտերնետ կապը։

Այժմ ներկայացնեմ դասարանական աշխատանքի մի փորձ բառապաշարի յուրացման և հարստացման վերաբերյալ։ Վերցնենք մի բնագիր (այն կարող է լինել ցանկացած տեքստ, հեքիաթ, պատմվածք, վեպի մի կրճատված հատված և այլն)։ Աշակերտներին նախապես կարելի է բաժանել խմբերի այնպես, ինչպես ուսումնասիրվող նյութը։ Յուրաքանչյուր խումբն ունենալու է նյութի իր հատվածն ու աշխատելու է այդ հատվածի վրա, այն է ա) դուրս գրել բոլոր նոր և անծանոթ բառերը, բ) թարգմանել դրանք, գ) կազմել նոր նախադասություններ՝ օգտագործելով նոր բառապաշարը։ Հավատացեք, այս աշխատանքին մեծ ոգևորությամբ սկսում է մասնակցել նույնիսկ մինչ այդ սեղանի տակ ուսուցչից «թաքուն» հեռախոսով խաղացող ամենաթույլ աշակերտը։ Ավելին՝ փորձը ցույց է տալիս, որ հեռախոսի բառարանից դուրս գրված բառերի թարգմանություններն ավելի հեշտ են մտապահվում և յուրացվում աշակերտների կողմից։ Վերջին տարիների փորձը գալիս է ասելու, որ այս տիպի աշխատանքը շատ տպավորիչ է լինում։ Դասարանում այս մեթոդը կիրառելուց հետո ուսուցիչն ավելի վստահ կհանձնարարի մեկ այլ անծանոթ դասի թարգմանությունը, որպես տնային աշխատանք։ Չէ՞ որ նա արդեն առաջացրել է աշակերտների մոտ հաճույք, զվարճանք և մեծ հետաքրքրություն այս տիպի աշխատանքի վերաբերյալ։ Նրանց համար այդքան ձանձրալի բառարանները հեռախոսներով փոխարինելը մեծապես խթանում է լեզվի ուսուցումը, բառապաշարի զարգացումն ու յուրացումը՝ դարձնելով ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ և հետաքրքիր թե՛ սովորողի և թե՛ ուսուցչի համար։ Հավելենք նաև, որ հավելվածային բառարանների մեծ մասն ունի միկրոֆոնի կոճակ, որի օգնությամբ աշակերտը հնարավորություն ունի լսելու բառի արտասանության ձևը (անհրաժեշտության դեպքում բազմաթիվ անգամներ)։ Այսպիսով ձանձրալի տառատարձության նշաններին փոխարինում է ինտերնետի միկրոֆոնի նշանը՝ տվյալ բառի ճշգրիտ արտասանության ձևով։

<u>Ինտերնետի դերն անգլերենի քերականության ուսուցման մեջ</u>

Հաճախ դասարանում քերականական որևէ նյութ բացատրելիս ուսուցիչը կարող է օգտվել ինտերնետ հարթակում արդեն տեղադրված բազմաթիվ

տեսադասերից՝ ցածր դասարաններում՝ մայրենի լեզվով բացատրած տեսադասերից, իսկ ավագ դասարաններում՝ ինչու՞ ոչ, նույնիսկ օտարազգի ուսուցիչների օտարալեզու՝ մասնավորապես անգլերենով բացատրած տեսադասերին: Իհարկե այս ամենը կարող ենք կիրառել արդեն առնվազն մեկ անգամ քերականական նյութը դասարանում բավականին հանգամանալից բացատրելուց հետո՝ հաշվի առնելով դասարանում յուրաքանչյուր աշակերտի մտավոր հնարավորություններն ու կարողությունը: Դասն ավելի հետաքրքիր ու մատչելի յուրացման համար կարելի է օգտագործել պրոյեկտոր, ցուցադրելու համար բազմաթիվ սլայդեր, նմուշներ և օրինակներ, ինչը կդարձնի ձեր դասն առավել հագեցած և պրոդուկտիվ:

Քերականական առաջադրանքներ, վարժություններ և վարժանքներ:

Հաճախ քերականական նյութի տեսությունը բացատրելուց հետո բախվում ենք այն խնդրին, որ դասագրքերում տեղադրված վարժությունների քանակը (ինչպես նաև որակը) չի բավարարում աշակերտներին տվյալ նյութը լիարժեք յուրացնելու համար: Ցավալի է, բայց՝ փաստ, մեր դասագրքերում գրեթե բոլոր քերականական բաժիններում շատ քիչ են առաջադրանքները: Տարիներ շարունակ մենք՝ ուսուցիչներս, ստիպված էինք լինում դիմել այս կամ այն հավելյալ նյութի օգնությանը (այլ դասագրքեր, նախապես ուսուցչի կողմից կազմած վարժություններ և հանձնարարություններ և այլն): Այսօր այս բացթողումը կարելի է հեշտությամբ լրացնել համացանցի օգնությամբ: Գրեթե գոյություն չունի քերականական այնպիսի մի նյութ, որի վերաբերյալ դուք չգտնեք բազմաթիվ, բազմաբնույթ առաջադրանքներ: Ընդ որում, ուսուցիչը կարող է ընտրել առաջադրանքի բարդության աստիճանը: Հիմա, ինչպե՞ս կատարել այս աշխատանքը:

Տարբերակ 1. Համավարակի ընթացքում, երբ բոլորս անցել էինք հեռավար ուսուցման, թե՛ աշակերտներն և թե՛ ուսուցիչները ինքնաբերաբար ծանոթացան տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններին: Ուսուցիչների մի մասն օգտագործում էր Zoom-ը, մի մասը Microsoft Teams-ը, շատերը Viber և Whatsapp-ը և այլն: Ներկայումս շատերս դեռ ունենք խմբեր Viber-ում կամ Whatsapp-ում, որտեղ ուսուցիչը կարող է համացանցից ընտրված առաջադրանքը և ուղարկել հղումը տվյալ խումբ: Այս տիպի աշխատանքում աշակերտներին զարմանալիորեն հիմնականում ոգևորում է այն փաստը, որ նրանք աշխատելու են ոչ թե տետրում՝

գրելով գրիչով (այսինքն նրանց համար թուղթն ու գրիչը դարձել են ձանձրալի) այլ պիտի տպեն հենց համացանցում կամ ձեռքի մի հպումով ընտրեն տրված տարբերակներից որևէ մեկը, ընդ որում այս աշխատանքը կարելի է կատարել ինչպես միջին և բարձր դասարաններում, այնպես էլ կրտսեր, տարրական դասարաններում որտեղ կարելի է կիրառել պատկերազարդ, զվարճալի և մատչելի պահանջներով առաջադրանքներ։

Տարբերակ 2. Եթե դասարանում ուսուցչի օգնությամբ և ուղղորդմամբ, հաճախ նար վերջինիս հսկողության ներքո անկախ իրենց կամքից աշակերտները ստիպված են լինում կատարել առաջադրանքներն ու վարժությունները, ապա տանը բնականաբար (սրանք արդեն դուրս են ուսուցչի վերահսկողությունից)։ Շատ են նաև այն դեպքերը, երբ տանը ծնողները, ելնելով ինչ-ինչ պատճառներից և հանգամանքներից, ի զորու չեն վերահսկել իրենց երեխաների տնային հանձնարարությունների լիարժեք կատարման գործընթացը։ Այստեղ ևս օգնության է հասնում «հրաշք» ինտերնետը։ Ուշագրավ է այն փաստը, որ երբ տնային հանձարարությունները տրվում են online հարթակում, յուրօրինակ աշխուժությամբ և խանդավառությամբ են դրանք կատարում աշակերտները։ Արդյունքում շահում են թե՛ աշակերտները, որոնք զինվում են գիտելիքներով, թե՛ ծնողները, որոնք լրացուցիչ ջանքեր չեն գործադրում տնային աշխատանքների պատշաճ կատարման համար և թե՛ ուսուցիչները, որոնք հասնում են նախապես իրենց առջև դրված նպատակի իրականացմանը և ապահովում իրենց դասարաններում բարձր առաջադիմություն և գիտելիքներով զինված աշակերտական կազմ։

<u>Լեզվի ուսուցման «լուռ շրջան». լսումներ (listening).</u>

Երբ մենք սկսել ենք տիրապետել մեր մայրենի լեզվին, մենք չենք սկսել խոսքից, մենք սկսել ենք լսելուց։ Օտար լեզու սովորող երեխաները երկար ժամանակ պիտի օգտվեն «լուռ շրջանից» և հենց այդ ժամանակահատվածում նրանք կարող են կլանել լեզուն։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք չենք կարող ապահովել աշակերտների համար օտարալեզու միջավայր՝ վստահ կարող ենք պնդել, որ անգլերենով լսումները մեծապես կարող են բարձրացնել ուսուցման արդյունավետությունը։ Կարող եք սկսել հեշտ, դյուրին կարճ երկխոսություններից և աստիճանաբար բարդացնել ու երկարացնել լսումները։ Կարելի է աստիճանաբար

լսումներն հատկացնել նաև առաջադրանքներ օրինակ՝ ա) լսել դիալոգն ու դուրս գրել բոլոր ծանոթ բառերն ու արտահայտությունները, բ) լսել դիալոգն ու դուրս գրել բոլոր անծանոթ բառերն ու արտահայտությունները, պարզել դրանց թարգմանությունները, գ) լսել դիալոգն ու պատասխանել ուսուցչի հարցերին, դ) լսել դիալոգն ու կազմել հարցեր, ե) լսել դիալոգն ու կազմել նմանատիպ երկխոսություն և կատարել այն դասարանում և այլն։

Լսումները կարող են լինել տարբեր տեսակի՝

ա) միայն լսումներ՝ առանց բնագրի առկայության։ Այս լսումներն առավել բարդ են և պահանջում են գիտելիքների առկայություն, որոշակի բառապաշարի առկայություն։

բ) լսումներ, այնուհետև բնագրի տրամադրում և քննարկում։ Սա ավելի մատչելի տարբերակ է, երբ լսումներից հետո ուսուցիչը տրամադրում է բնագիրը, որի շուրջ կարելի է կատարել բազմաբնույթ աշխատանքներ։

գ) լսումներ՝ նախապես ծանոթանալով բնագրին։ Սա ամենահեշտ տարբերակն է, երբ աշակերտները նախապես գիտեն, թե ինչ են լսելու և ինչի մասին է խոսքը գնալու։

Նախքան լեզուն օգտագործելը, սովորողը պետք է նախ ընտելանա դրան։ Կարիք չկա շտապեցնել աշակերտին, որ վերջինս խոսի ու ամենևին էլ կարիք չկա, որ նա ամբողջ ժամանակ խոսի՝ որպեսզի բարելավվի իր լեզվական գիտելիքները։ Լեզվի այս զարգացումը տեղի է ունենում դանդաղ, և խոսքի հմտությունները հայտնվում են շատ ավելի ուշ քան խոսակցության ընկալման հմտությունները, հաճախ նույնիսկ եթե պայմանները իդեալական են։

Ընդ որում այս ֆունկցիան մեծապես օգնում է ընկալել օտար լեզուն, հասկանալ նրա առանձնահատկությունները՝ հատկապես ինտոնացիայի, հնչողության յուրահատկությունները, տվյալ լեզվին բնորոշ շեշտադրումները։ Այլ կերպ ասած, այս գործառույթը մեծապես օգնում է լեզվի ֆոնետիկայի հետ կապված հարցերում, քանի որ այդ լսումներում խոսում են անգլերենը որպես մայրենի լեզու օգտագործող մարդիկ։ Հարկ է նշել, որ այս աշխատանքը սովորողներից պահաջում է դասարանում ապահովել լռություն, որպեսզի ունկնդիրներին հասանելի լինի լսումը։

<u>Օտար լեզվի ուսուցումը աուդիո, վիդեո և անիմացիայի օգնությամբ.</u>

Օտար լեզու ուսումնասիրելը համակարգչի օգնությամբ շատ ավելի հեշտ է, քան ավանդական կրթական և մեթոդական համալիրների օգնությամբ, քանի որ այն համատեղում է գրքերի աուդիո և վիդեո հասանելիություն: Համացանցում, ի տարբերություն ավանդական ուսուցման գործիքների, նյութը կարող է տրամադրվել աուդիո, վիդեո և անիմացիայի օգնությամբ, ինչը մեծապես հեշտացնում է օտար լեզվի ընկալումը և ձուլումը:

Այժմ, ցանկանում եմ մեջբերել իմ անձնական փորձից մի փոքրիկ օրինակ:

Անգլերենի դասագրքերում՝ հատկապես ցածր դասարանների դասագրքերում բնագրերի մեջ գերակշռում են հեքիաթներն ու կարճ պատմվածքները, ինչ բնական է, համապատասխանում է նրանց՝ սովորողների տարիքային առանձնահատկությունը:

4-րդ դասարանի դասագրքի մեջ գրեթե վերջում կա երեք մասից բաղկացած «Մոխրոտիկի» հեքիաթը: Երբ սկսում ենք ուսումնասիրե այս հեքիաթը, ես աշակերտներին ոգևորում եմ՝ խոստանալով, որ եթե իրենք լավ յուրացնեն հեքիաթը, մենք անպայման մի դաս կնվիրենք այդ հեքիաթի մուլտֆիլմի դիտմանը դասարանում: Եթե տվյալ դասարանում առկա է պրոյեկտոր, ապա օգտվում ենք այդ գործիքից, եթե ոչ՝ մենք այդ դասն անցկացնում ենք համակարգչային դասարաններում այդ ժամանակ և այդ պատրվակով են դիտում տեսաձայնագրություն (այս դեպքում՝ մուկտֆիլմ): Բայց ինչ խոսք, կարելի է նաև ավելի փոքր տարիքում, ավելի ցածր դասարաններում, ավելի մատչելի լեզվով նկարահանված կարճ վիդեոներ կամ անիմացիոն ֆիլմեր դիտել: Իսկ 5-րդ և ավելի բարձր դասարաններում կարելի է ավելի հաճախ կատարել նմանատիպ աշխատանք: Ուսուցիչը նախապես դնում է առաջադրանքը, նպատակը ուղղորդում էսովորողներին իրենց որոնողական գործունեության մեջ, օգնում է նրանց հասկանալ տեղեկատվությունը, յուրացնել նյութը, ինչու՞ չէ, երբեմն նույնիսկ ինքնուրույն շփվել ինտերնետում: Ուսուցիչը պետք է մոտ լինի աշակերտներին, երբ նրա օգնության կարիքն ունենան, բայց չափավոր, այնքան, որ չխանգարի նրանց ինքնուրույն աշխատելու համար, որպեսզի աշխատանքը կատարվի դասարանի բոլոր աշակերտների կողմից: Հաճախ այս տիպի աշխատանքներ դասարանում կատարելը մեծ հետաքրքրություն է առաջացնում աշակերտների մոտ, և նրանք սկսում են ինքնուրույն, իրենց նախաձեռնությամբ, տանը դիտել տարբեր անիմացիոն ֆիլմեր:

Ուսուցչի դերն այս հարցում հետևյալն է, որ նա պիտի հորդորի աշակերտներին սկզբում դիտել այն մուլտֆիլմերը, որոնց բովանդակությանը երեխաներն արդեն քաջ ծանոթ են, օրինակ՝ «Ալադինը», «Ջրահարսը» և այլն։ Աստիճանաբար կարելի է նացում կատարել դեպի ավելի բարդ և անծանոթ մուլտֆիլմեր, հետագայում՝ ինչու՞ չէ, նաև ֆիլմեր կամ հեքիաթ-ֆիլմեր։ Այս եղանակով մենք աստիճանաբար զարգացնում ենք երեխայի օտար լեզվի յուրացման բնազդային զգացողություն։ Սա շատ ավելի արդյունավետ մեթոդ է, քան ուսուցչի կողմից հնչեցված հետևյալ հրահանգը. «Երեխանե՛ր, փորձեք հիշել և կիրառել հետևյալ բառերն ու արտահայտությունները»։

Այլ մեթոդներ և կրթության ձևեր

Օտար լեզուն սովորելու մեկ այլ անփոխարինելի օգնական են օտարերկրյա հեռուստաալիքները ու ռադիոկայանները ինչպիսիք են CNN-ը, BBC-ն և շատ ուրիշներ։ Հորդորեք աշակերտներին, հատկապես ավագ դասարաններում, որքան հնարավոր է շատ դիտեն տարբեր ծրագրեր և հաղորդումներ, որպեզսի հնարավորինս ընդլայնվի նրանց բառապաշարը ոչ թե մեկ ուղղությամբ, այլ տարբեր թեմաների՝ բժշկություն, քաղաքականություն, արվեստ, մշակույթ և այլն։

Հորդորեք ձեր աշակերտներին որքան հնարավոր է շատ և հաճախ լսեն օտար երաժշտություն։ Անշուշտ նրանք իրենց համար կգտնեն սիրելի խմբեր և կատարողներ, որոնց շնորհիվ կունենան լրացուցիչ խթան լեզու նսովորելու համար։ Նրանք կգտնեն տվյալ երգի բառերը (օգտվելով lyrics կամ karaoke ֆունկցիաներից), անգիր կսովորեն երգերը՝ հարստացնելով բառապաշարը և կսկսեն ավելի ինքնավստահ կիրառել գիտելիքները։ Այս ամենը կօգնի նրանց հասնել լեզվի բարձր գիտելիքների։ Նշենք նաև, որ այս մեթոդն ընդհանուր առմամբ ամենահաճելին է և այս մեթոդից օգտվում են ո՛չ միայն պատանիներն ու դեռահասները, այլ նաև մեծահասակները և հաճախ ինքնաբերաբար՝ պարզապես գեղեցիկ և հանրահայտ երգեր երգելու մեծ ցանկությունից դրդված։

Էլեկտրոնային նամակագրություն քնիկ խոսնակների հետ։

Ամենից առաջ հարկ է ընդգծել, որ այս գործառույթը իրականացնելիս մեզ պետք կգա ծնողական վերահսկողությունը և խիստ վերաբերմունքը, քանի որ այստեղ առկա են ռիսկի գործոններ։ Եվ այսպես, ո՞րն է օտարերկրացիների հետ շփվելու

առավելությունը: Առաջին հերթին, նրանք սովորում են կենդանի օտար լեզու, այս լեզվի կրիչի օգնությամբ: Սա հիմնականում տեղի է ունենում համացանցային խաղերի ժամանակ, երբ երեխաները՝ տարված իրենց խաղով և հաղթելու մեծ ձգտումից դրդված, հեշտությամբ հաղթահարում են կաշկանդվածությունը, արագ և հեշտ ծանոթանում օտարերկրացի իրենց տարիքակիցների հետ և սկսում շփվել իրենց լեզվով՝ միաժամանակ ակամայից հարստացնելով սեփական գիտելիքները:

<u>Հետազոտական աշխատանքներ, միջոցառումներ, պրեզենտացիաներ, սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացում:</u>

Նախատեսված դասերն անցկացվում են համակարգչային դասասենյակներում: Աշակերտներն ուսուցչից նախապես ստանում են առաջադրանք ու նախատեսված ժամանակահատվածում պատրաստվում, որի ընթացքում նրանք ինքնուրույն որոնում են անհրաժեշտ տեղեկատվությունը կատարում դրա վերամշակում: Ցանկացած ստեղծագործական և հետազոտական առաջադրանք կատարելիս աշակերտները զարգացնում են ոչ միայն իրենց ստեղծագործական կարողությունները, այլ նաև օտար լեզվի՝ բառապաշարի, լեքսիկայի և ինչու՞ չէ, նաև քերականական գիտելիքները: Բարելավվելով լեքսիկական հմտությունները՝ աշակերտները կարող են ստեղծել կարճ ֆիլմերմ սլայդ շոուներ, պրեզենտացիաներ և ներկայացնել դրանք որպես հավելյալ նյութ՝ արժանանալով ուսուցչի գովեստին: Փոքր-ինչ ավելի հմուտ աշակերտները կարող են նույնիսկ կազմել թեստեր, մասնակցել և կաազմակերպել տարատեսակ վիկտորինաների և մրցույթներ: Այս կերպ մենք ոչ միայն կխթանենք լեզվական հմտություններ այլ նաև կզարգացնենք աշակերտների մեջ ինքնուրույնություն, ստեղծագործական ունակություններ:

<u>Բլոգավարումը</u> նույնպես շատ տարածված և էֆֆեկտիվ միջոց է լեզվի զարգացման և յուրացման համար: Արդեն կա բլոգերների մեծ համայնք սովորողների և ուսուցիչների կողմից, ովքեր վավեր են փորձով: Բլոգերները գրեթե ամենօրյա ռեժիմով վարում են իրենց բլոգերը, գրում են գրություններ և մեկնաբանություններ անգլերեն լեզվով: Այսպիսով անգլերենը դառնում է միջնորդ տարբեր մշակույթների մարդկանց միջև հաղորդակցման համար: Բլոգավարումը բոլորովին էլ պարտականություն չէ, այլ շատ հաճելի, հետաքրքրաշարժ և իմաստալից զբաղմունք:

Սա ավելի շատ նման է նոր ընկերների որոնմանը, նոր լեզվով նոր մշակույթների ճանաչմանը։

Էֆեկտիվություն

Ինտերնետը ներկայացնում է լեզվի ուսուցման արդյունավետության նոր մակարդակ։ Իսկ արդյունավետությունը կարոր է, քանի որ այն ինտենսիվություն է ստեղծում։ Դա պահանջում է բարձր աստիճանի ինտենսիվություն մեկ այլ լեզվով աշխատելու համար։

Մեր օրերում թերևս դասընթացների ավանդական ուսուցման տեխնիկան այնքան արդյունավետ չէ, որքան ինտերնետի օգտագործմամբ ուսուցումը։ Շատ դժվար է տարբեր մակարդակների և հետաքրքրությունների աշակերտների համար դասն ու դասապրոցեսը դազրձնել հավասարապես հաճելի ու գրավիչ։ Այս ամենի ցավալի հետևանքն է հանդիսանում աշակերտների սթրեսը և ձանձրույթը։ Շատերը, հիասթափված իրենց դպրոցի փորձից, ավարտում են այն՝ լիովին համոզված, որ նրանք չեն կարողանա սովորել, թե ինչպես կարելի է խոսել նոր լեզվով։ Նրանք կորցնում են հերաքրքրությունը և վերջնականապես հրաժարվում այդ գաղափարից։ Նման տխրահռչակ ավարտից խուսափելու համար անգլերեն սովորել ցանկացող մարդկանց համար ինտերնետը բացում է արդյունավետության և բավարարվածության նոր աշխարհ։ Ինտերնետն առաջարկում է բարձրորակ և բազմազան բովանդակություն, որը շատ հաճախ գերազանցում է ավանդական դասընթացների դասսերի ռեսուրսները։ Ինտերնետում կան դասընթացների այնքան բազմազան և լայնածավալ մեթոդաբանություններ և հնարավորություններ, որոնց մասին կարելի է միայն երազել։ Ուսուցիչը կարող է նպատաներ դնել և նույնիսկ չափել աշակերտների նվաճումները։

Եզրակացություն

Ուսուցման այս նոր մեթոդը գրավիչ է ոչ միայն աշակերտների և ուսանողների, այլ նաև բոլոր տարիքային խմբերի համար: Մինչ երիտասարդներն ու պատանիները առավել եռանդուն են ինտերնտում, ըստ Կաիսեր ընտանիքի հիմնադրամի ուսումնասիրությունների 55-64 տարեկան ամերիկացիների 70 %-ը ակտիվորեն օգտագործում է ինտերնետը որևէ այլ օտար լեզու սովորելու, ուսումնասիրելու նպատակով: Նմանատիպ միտումներ են նկատվում նաև Եվրոպայում և Ասիայում:

Վերջին տարիներին ավելի ու ավելի է բարձրացվում դպրոցներում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հարցը: Սրանք ոչ միայն նոր տեխնակական միջոցներ են, այլև դասավանդման նոր ձևեր և մեթոդներ, նոր մոտեցումներ ուսուցման գործընթացին:

Այսպիսով, կրթության ոլորտում առկա իրավիճակը նախատեսում է ինտերնետում տեխնոլոգիաների կիրառում դասարանում և արտադասարանական գործունեության ընթացքում: Մեր կողմից բացահայտված դպրոցական կրթության տեղեկատվականացման դրական կողմերը թույլ են տալիս եզրակացնել, որ դպրոցները պետք է հագեցած լինեն ինտերնետային տեխնոլոգիաներով, աշակերտները և ուսուցիչները պետք է օգտագործեն ինտերնետի կրթական հսակայական հնարավորությունները՝ նոր ձևերով կազմակերպելով ուսուցման գորընթացը՝ ուղղորդելով ջանքերը, ձևավորել սովորողների անկախ ստեղծագործական մտածողությունը: Տեղեկատվական արագ զարգացման դարաշրջանում ինտերնետային տեխնոլոգիաների բազմաթիվ տեսակներ մեծ հնարավորություններ են ընձեռում ստեղծագործական և հետազոտական հմտությունների և կարողությունների զարգացման համար: Այս ամենը ձևավորում և զարգացնում է աշակերտների տեղեկատվական, լեզվական, հետազոտական ունակությունները, նպաստում է վերլուծական հմտությունների զարգացմանը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն արդյունավետ կլինի միայն այն դեպքում, եթե կրթական գործընթացում ձևավորվի այդ տեխնոլոգիաների տեղի և դերի ճիշտ ըմբռնումը: Դպրոցական կրթության ներկա վիճակը ենթադրում է ինտերնետի հիմնական միջոցների օգտագործում: Անգլերենի

դասերին տարբեր տեսակի ինտերնետային տեխնոլոգիաների ռացիոնալ կիրառումը մեծապես նպաստում է աշակերտների ուսումնառության արդյունավետությանը։ Այնուամենայնիվ Է.Ա. Դոդոպրիգորովան իր հոդվածում իրավացիորեն նշում է, որ «դասարանում ինտերնետ օգտագործելը չպետք է ինքնանպատակ լինի։ Լեզվի ուսուցման մեջ ինտերնետի տեղն ու դերը ճիշտ որոշելու համար առաջին հերթին անհրաժեշտ է գտնել հարցերի հստակ պատասխաններ՝ ում համար, ինչի համար, երբ, որքանով այն պետք է օգտագործվի»։ Չի կարելի չհամաձայնել այս հոդվածի հեղինակի հետ, որ միջնակարգ դպրոցում օտար լեզու սովորելու հիմնական նպատակը հաղորդակցական հմտությունների ձևավորումն է։

Հաշվի առնելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների բոլոր առավելություններն ու հնարավորությունները, մի՛ մոռացեք, որ համակարգիչը, որն իրականացնում է ուսուցման և ուսումնառության մի շարք գործառույթներ, դեռևս չի կարող ամբողջությամբ փոխարինել օտար լեզվի ուսուցչին։ Ուսուցիչը եղել է, կա ու կլինի այն նվիրյալը, ով ստեղծում է տվյալ պետության ապագան։

«Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցողական առարկան, ամենակենդանի օրինակն աշակերտի համար հենց ինքը ուսուցիչն է»։

Ադոլֆ Դրիստերվեգ

Օգտագործված գրականության ցանկ

1.Վլադիմիրովա Լ.Պ. «Ինտերնետ օտարալեզու դասեր»- lyash թիվ 3, 2003թ.

2.Օլխովսկայա Լ.Ի. «Goldfish» ցանցում «Ինտերնետային տեխնոլոգիաները ավագ դպրոցում»

3.Polat E.S. «Ինտերնետային ռեսուրսների օգտագործման ձևերն ու մթոդները օտար լեզվի դասի ժամանակ»

4.Տավչուկ Տ.Լ. /Ուկրաինայի Ազգային Տեխնիկական Համալսարանի դասախոս/ «Համակարգչի և ինտերնետի դերը օտար լեզվի ուսումնասիրության մեջ»։